
ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ–ՄԱՐՄԱՇԵՆ–ՏԻՐԱՇԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍԵՐԳԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պատմական Շիրակ գավառի հյուսիսային մասում, Գյումրի քաղաքից 10 կմ արևմուտք գտնվում է միջնադարյան հայ դասական ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Մարմաշենի վանքը:

Վանքից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռու գտնվում են քարեդարյան մարդու այրեր, իսկ վանքից 1 կմ արևելք՝ ուրարտական Արգիշտի I թագավորի արձանագրությունն է՝ Էրիախի երկիրը նվաճելու և Իրդանուխի ու Բշգիդուլու քաղաքները գրավելու մասին: Պեղումներով պարզվել է, որ Ք. ա. III հազ. այստեղ խիտ բնակություն է եղել, ինչը վկայում են 5 կմ շառավղով տարածքում ավելի քան տասը ամրոցները:

Մարմաշենից մի քանի կիլոմետր արևմուտք բացված խեցեղենով հարուստ դամբարանները խոսում են այն մասին, որ կյանքն այստեղ շարունակվել է նաև II հազարամյակից:

Տիրաշեն կոչվող բնակավայրը, ինչպես նաև շրջակա տարածքը առատ է ժայռերին փորագրված երկրաչափական պատկերներով: Պեղումներով այսօր հայտնաբերվում են հնագիտական այնպիսի առարկաներ, ինչպիսիք տարբեր նետասլաքներն ու ուլունքներն են: Վահրամաբերդում Արգիշտի I-ի արձանագրության մոտ բացվել են նախաուրարտական, ուրարտական, ինչպես նաև միջնադարյան շերտեր:

Մարմաշենի վանքը գտնվում է նույն տարածքում՝ ինչ Վահրամաբերդը, որի ժայռերից մեկի վրա էլ փորագրված է Արգիշտի I-ի վերոհիշյալ արձանագրությունը: Հավելենք նաև, որ Մարմաշենի վանքի ու Վահրամաբերդի միջև ազատ տարածություն գրեթե չկա: Այստեղ Մարմաշենի վանքի հարևանությամբ է գտնվում Ք. ա. III հազ. վերաբերող բնակավայրը¹: Իսկ դրանից արևելք է գտնվում I հազ. վերաբերող դամբարանադաշտը²: Հատկանշական է, որ Ք. ա. III հազ. պեղվայրում ի հայտ եկան II հազ. վերաբերող հազվագյուտ հանդիպող շերտը: Վերջինս ապացույց է այն բանի, որ Մարմաշենի ամբողջ տարածքը խիտ բնակեցված է եղել ինչպես վաղնջագույն, այնպես էլ հաջորդող ժամանակներում:

Մարմաշենի վանքի պեղումներից, միջնադարյան շերտերից ներքև հաջողվել է հայտնաբերել մեկ այլ հարուստ շերտ ևս: Խեցեղեն անոթների բեկորների գյուտե-

¹ Հարկ է նշել, որ վերջին տարիների ուսումնասիրությունները Ախուրյան գետի երկու ափերում պարզել են, որ սկսած Արփի լճից մինչև Անի մայրաքաղաք, ձորի երկու կողմերում ապրել է մեծաթիվ բնակչություն:

² Շինանյութ, հատկապես պեմգա, ձեռք բերելու նպատակով այս վայրը ժամանակին քանդվել է:

րը բավարար են, որպեսզի հավաստեն այնտեղ եղած հարուստ նյութի և ժամանակին այդ վայրերում քաղաքակիրթ հասարակության գոյությունը: Միայն մեծ չափի պեղումներ կատարելու դեպքում կստանանք ճշգրիտ տեղեկություններ նախաբազրատունյաց ժամանակաշրջանի մշակույթի ու կենցաղի վերաբերյալ³:



Լուսանկարը՝ Հ. Ադամյանի
«Գումայրի» արզելոց-թանգարան

Հայ դասական ճարտարապետության համար նորություն չէր, իհարկե, արտաքին ճակատների ու դրանց համամասնությունների՝ բնության հետ ներդաշնակության մեջ լուծելու և արժեքավորելու խնդիրը: VII դ. ճարտարապետական կոթողները դրանց լավագույն ապացույցները տվել են:

³ Վանքի պարիսպների արևմտյան հատվածի ուսումնասիրությամբ պարզվել է, որ շարվածքը կարող է վերաբերել նախաքրիստոնեական ժամանակներին: Պարզվում է, որ ուրարտացիների կողմից Էրիախի երկրի նվաճման մասին արձանագրությունը (Մենուայի որդի Արգիշտիի կազմած) ճշգրիտ չէ: Հայկյան մշակույթի հայտնաբերումն ինչպես Վահրամաբերդում, այնպես էլ Տիրաշենում և Մարմաշենի վանքում ապացույց են տեղական մշակույթի հզորության:

Մարմաշենում հիմնական համալիրի կառուցման ժամանակ արդեն գոյություն է ունեցել հարավային կոչված եկեղեցին, որը, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրություններն ու պեղումների արդյունքները, լրիվ կանգուն վիճակում է գտնվել: Կաթողիկեն, որ համալիրի գերիշխող կառույցն է, բավական հեռու է դրվել՝ ապահովելով հարավային ճակատի տեսանելիությունը բավական հեռու տարածությունից: Հենց այդ ճակատի վրա էլ փորագրված է վիմական տարեգրությունը, ուր տրված է վահրամյան տան պատմությունը.

...ՄԵՐ ԵՒ ՄԵՐ ՈՐԴԻՆԵՐԻ ԱՐԵԱՆ ԳՆՈՎ
ԽՆԴՐԵՑԱՔ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻՄ:

Արձանագրությունը փորված է հարավային ճակատի կենտրոնում և, կարծես թե, ամեն ինչ արված է այն ի ցույց, ի լուր և ի տես աշխարհին: Չթերագնահատելով Հայկական լեռնաշխարհում հայտնի շատ վիմական արձանագրությունների պատմական մեծ արժեքը, նշենք, որ Մարմաշենին առանձնանում է իր ժողովրդի համար խաղաղություն ապահովելու բուն ձգտմամբ:

Կաթողիկե Սուրբ Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի արձանագրությունը դիրքի առումով կարգալու համար հարմար չէ: Հյուսիսային եկեղեցին կառուցվել է ավելի ուշ և Վահրամ Պահլավունու վանքի համալիրի կառուցմանը ժամանակակից չէ: Հ. Օրբելին այն կարծիքին է, որ շենքը կառուցվել է XIII դ.⁴:

Այս արձանագրության մեջ Վահրամ Պահլավունու թոռը՝ արքեպիսկոպոս Գրիգորը փաստում է, որ 1225 թ. վանքը նորոգել է և միավորել ներքևի վանքի հետ: Այսինքն՝ Վահրամ Պահլավունու ժամանակ վերի վանք կոչվածն առանձին էր: Մարմաշենում, ինչպես և այլ վայրերում տեղի է ունենում բնակավայրերի մեծացում-ընդլայնում: Իրողությունն այն է, որ ինչպես Կումայրին և մյուսները, Մարմաշենը ևս դառնում է տարածքային առումով մեծ բնակավայր, թե ի՞նչ հզորություն կամ թուլություն է ձեռք բերում, դա այլ հարց է:

Վանական համալիրներում վանականների դերը երկակի է եղել: Մի կողմից, հատկապես Չաքարյանների տիրապետության օրոք, վանականներն ստեղծել են ամեն հնարավոր բան իրենց կենցաղը բարելավելու և արժանապատիվ ապրելու համար. ի վերջո, ունեցել են ոչ միայն հզոր տնտեսություն, այլև ուժեղ իշխանություն: Մյուս կողմից, ջանք չեն խնայել պաշտպանելու երկիրն օտար նվաճողներից, Հայոց աշխարհին հատկապես արևմուտքից սպառնացող՝ Բյուզանդիայից տարածվող ու պարտադրվող հայակուլ կրոնական նկրտումներին: Այսպես են վարվել դեռևս VII դ. Դպրեվանքի առաջնորդները՝ Բարսեղ Ճոնի գլխավորությամբ: Բազրատունյաց թագավորության հետագա տարիների ընթացքում այս վանքերն իրենց կենտրոնի դերն ավելի են ուժեղացրել: Մարմաշենի վանքի կառուցումից հետո առաջնությունը հետզհետե անցնում է վանքում գործող Երեմիայի և նրա հոգեորդի Սոսթենեսի գլխավորությամբ գործող վանականների խմբին: Նրանք սերտ կապերի մեջ են մտնում ինչպես Հառիճի, այնպես էլ Անիի, Կումայրիի ու Երազավորսի առաջնորդների հետ: Երեմիայի և Սոսթենեսի դավանաբանական

⁴ И. О р б е л и. Избранные труды. Ереван, 1963, с. 440.

երկերը հասել թե չեն հասել այսինչ կամ այնինչ տիեզերական ժողովների քննությանը, հայտնի չէ, բայց որ Հայոց աշխարհի շատ վանքերի կրոնական գործիչներ խստագույնս հաշվի են նստել դրանց հետ, անժխտելի է: Հայտնի է, որ Ներսես Լամբրոնացին մեղադրական ճառեր էր գրում՝ ուղղված ինչպես Կիլիկիայի, այնպես էլ հայաստանյան բոլոր վանքերում տեղ գտած չարաշահումների դեմ. «ամեն ծակ ու ծուկ մի օգտագործեք պատարագ մատուցելու և շահ ստանալու համար»⁵: Մակայն հայտնի է նաև, որ հայոց վանքերն այս անգամ առանց բացառության, ապահով ապաստարաններ են եղել ինչպես ֆիզիկական գոյության, այնպես էլ հոգևոր մշակույթի համար: Դպրեվանքի տիրույթները ավելի են տարածվում թե հյուսիս, թե հարավ, արևմուտք ու արևելք: Փաստորեն, Անի մայրաքաղաքից հյուսիս ողջ տարածքը, ներառյալ նաև Աշոցքը, Դպրեվանքի բաղկացուցիչ մասերն էին: Օտար արշավանքների հետևանքով հարյուրավոր խաչքարեր կործանվել և միայն բներն են մնացել (հատկապես Տիրաշեն-Դպրեվանք հատվածում): Շիրակի ողջ տարածքում բնակիչների մոտ պահվում են ձեռագրեր, Կարմիր Ավետարան, Նարեկ և այլն (ամենաշատը Մարմաշեն, Վահրամաբերդ, Կապս գյուղերում):

Մարմաշենի Վանքի հարավային պատին փորագրված է Վահրամ Պահլավունու արձանագրությունը: Այն չափազանց կարևոր է և սխալված չենք լինի, եթե ասենք, որ Պահլավունու ամենակարևոր վկայագիրն է: Այն մի տեսակ ամփոփագիր է Պահլավունյաց տոհմի և, մասնավորապես, Վահրամի ու այդ գերդաստանի գործունեության, ուստի արձանագրության տեղին այդքան մեծ կարևորություն է տրված: Բացի այդ, փորագրված է շատ գեղեցիկ տառերով՝ հատուկ ուշադրության է արժանացել տողերի կառուցվածքը:

Հարավային և հյուսիսային պատերը զարդարված են սլացիկ կիսասյուներով, վերը երկկենտրոն աղեղներով կազմված հինգ կամարներով: Կենտրոնականը, որն ամենալայնն է (4.5 մ և ավելի), գերազանցում է եզրերի կիսասյուների լայնությունը միասին վերցրած (3մ 60 սմ): Բնականաբար, սրա կամարն էլ մյուսներից բարձր է: Մյուս պատերի նման, հարավայինն էլ բարձրանում է չորս գետնախարխսիների վրա, ուր և դրված են զույգ կիսասյուների հիմքերը կամ խարխիսները՝ մոտ 35 սմ բարձրությամբ և 46 սմ լայնությամբ: Սրանից ավելի քան 2 մ բարձրության վրա սկսվում է ձևավոր զարդանախշը և տեղադրված են կիսասյուները՝ յուրաքանչյուրը 20 սմ լայնությամբ բարձրանալով մոտ 3 մ, ձևավորվում են որպես կիսագնդաձև զույգերով խոյակներ՝ յուրաքանչյուր ելուստի վրա երկուական շրջանաձև զարդերով: Հենց սրանց վրա էլ նստած է կամարի հիմքը:

Վահրամաշեն Կաթողիկե եկեղեցու մեծ արձանագրության էությունը ոչ միայն Պահլավունյաց տոհմի, այլ նաև Բագրատունյաց թագավորների խտացված քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային պատմությունն է: Պարզվում է, որ Վահրամը նաև կառուցող ճարտարապետն է, ինչպես Անբերդի, այնպես էլ Մարմաշենի, Անիի ու Բագրատունյաց թագավորության պաշտպանական

⁵ Սրբոյն Ներսեսի Լամբրոնացույ Տարսնի եպիսկոպոսի խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցույ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 178:

համակարգերի: Միջնադարում թագավորն իրավունք ուներ կառուցելու քաղաք, բերդ, կամուրջ, կարևոր ճանապարհներ (Ամբերդ եկող Արքաշեն–Արխաշան)⁶:

Պահլավունյաց տոհմը կարողացավ պահել կենսունակությունն ու կառուցեց Հռոմկլա, Լամբրոն, Լնբերդ ամրոց-քաղաքները: Եթե սրան ավելացնենք Ներսես Լամբրոնացու և այլ խոշոր մտածողների տիտանական աշխատանքը՝ բուն Հայաստանում թագավորության վերացումից հետո վառ պահել դարերով մշակած ու հղկած մշակույթի ջահը և դրանով դիմակայել արդեն Եվրոպայից եկող խաչանշանով նոր նվաճողներին, ապա պարզ և հասկանալի կդառնա Գրիգոր Մագիստրոսի ժլատ, բայց դիպուկ մի քանի նախադասությունների իմաստը, որով բնութագրում է կենտրոնաձիգ իշխանության համար Դվնո պարիսպների տակ իր և իր որդի Գրիգորի արյունը հեղած Վահրամիս⁷:

Հետաքրքիր է Տիրաշենի ամրոցի տարածքում պեղված -3 դամբարանը: Տուֆ քարից սարքված կափարիչի զարդերը հար և նման են շրջապատի ժայռանշաններին: Դամբարանից հայտնաբերված նյութը թվագրվում է մ. թ. ա. VII–VI դդ.: Հատկանշական է զարդարված ձիու գլուխը, որը դրված էր մշակված տուֆ քարի վրա:

Տիրաշենի միջնաբերդ ամրոցից արևմուտք գտնվող չափավոր մեծությամբ եկեղեցին ինչպես արտաքուստ, այնպես էլ ներքուստ խաչաձև է: Կղմինդրածածկ եկեղեցու այս տիպը հայտնի է վաղ միջնադարից, և վստահաբար կարելի է եզրակացնել, որ գործ ունենք երկրորդ վերածննդի ժամանակաշրջանի հետ: Բազրատունյաց թագավորության տիրապետության օրոք Անի մայրաքաղաքը դարձավ վերոհիշյալ վերածնության կենտրոն: Մարմաշենը մեր հանրապետության տարածքի այդ տիպի լավագույն հուշարձաններից է: Ախուրյանի ձորի, հատկապես ձախափնյա հուշարձանները, որոնցից մոտ մեկ տասնյակ հայտնաբերվել են, դրա վառ ապացույցն են: Տիրաշենի վերոնկարագրյալ, դրսից և ներսից խաչաձև հատակազօծով եկեղեցին այդ շրջանին է վերագրվում:

Հետաքրքիր է, թե ինչու է տաճարն այդ տեղում կառուցվել: Հիշենք, որ տաճարից մի քանի կիլոմետր հեռու VII դ. կառուցվել էր Դպրեվանքը, որ X–XI դդ. այն լրացվել է այլ կառույցներով, որոնք մասամբ խախտել են հինը: Այդպիսին են ինչպես Շիրակի, այնպես էլ հանրապետության այլ մարզերի հուշարձանները: Այդ առումով առանձնապես հատկանշական են Սյունիքն ու Լոռին: Վերջինիս Հաղպատ–Սանահին հուշահամալիրի կառուցապատման մեջ կիրառված է նույն սկզբունքը: Ուրեմն՝ ինչպես Բազրատունյաց թագավորության հիմնական միջու-

⁶ Վահրամ Պահլավունին բացառիկ իշխան է, որը ոչ միայն կառուցել, այլև հոգացել է թագավորության պահպանումը: Տրդատ ճարտարապետն ի գործու չէր անմիջական մասնակցություն ունենալու Մարմաշենի և մյուս կառույցների շինարարությանը: Հնացած պետք է համարել իշխանների, թագավորների ու թագուհիների պատվիրատու լինելու գաղափարը. Կատրանիդեն՝ Անիում, Խոսրովանույշը՝ Սանահին–Հաղպատում, Սոփիան՝ Սյունիքում և Վայոց Ձորում, Մմբատ Տիեզերակալն ու Գագիկը՝ պետության ողջ տարածքում ակտիվ մասնակիցն են եղել բոլոր կառույցների իրականացմանը: Ներսես կաթողիկոսը Զվարթնոցի, Կոմիտասը՝ Հոփսիմեի կառուցողն է, ոչ պատվիրատուն, Գրիգոր Մամիկոնյանը՝ Արուձի, Վասակ Պահլավունին՝ Ծաղկաձորի, Բազրատունյաց թագավորական տան ներկայացուցիչներն իրենց սպառեցին Կիլիկիայում:

⁷ Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցվոյ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 63:

կը կազմող Շիրակում, այնպես էլ վասալական կախման մեջ գտնվող Կյուրիկյան, Սյունիքի ճարտարապետական արվեստի վրա խիստ ազդել է նույն ոճը: Հարավից՝ Վասպուրականից եկած Մանվել ճարտարապետի ուրույն ոճը խառնվել է վերոհիշյալին: Այսպիսով, ստացվում է հետևյալ պատկերը. Բագրատունիների օրոք Դպրեվանքը չի սահմանափակվել միայն իր հիմնական վայրով, այլ ընդգրկել է Մարմաշենը՝ այս անգամ գրչության կենտրոնների մեջ ունենալով նաև Մարմաշենի, Կումայրիի, Երազգավորսի, Մայիսյանի, Հոռոմի, Խծկոնքի, Մաղմուսավանքի վանական համալիրները:

Մարմաշենի Կաթողիկե եկեղեցու վրա արտաքուստ կա երեք մեծ արձանագրություն: Սրանցից մեկը՝ առաջինը, փորագրված է հարավային պատին՝ կենտրոնում, և լրացնում ու հարստացնում է հուշարձանի հարդարանքը: Արձանագրությունը գեղեցիկ և ճաշակով է գրված ոչ միայն տառերի, այլև տեղադրման իմաստով: Հարավային պատի աջ անկյունում տեղադրված է Աբխազաց և Հայոց թագուհի Մարիամի վկայագիրը, որով վերջինս մեղքերի թողություն է խնդրում Աստծուց իր պապ Գագիկ I Բագրատունու համար: Հիշատակվում են բազմաթիվ այգիներ, որոնք նվիրաբերվել են վանքին:

Առաջին երկու արձանագրությունները ժամանակով իրար շատ մոտ են: Առաջինը գրված է 1029 թ., երկրորդը՝ 1-2 տասնամյակ հետո: Դրանով է բացատրվում նաև դրանց տառաձևերի նմանությունը: Օրինակ, գրեթե երկու տեքստերում էլ Հ, Ջ, Յ և Թ տառերը նույն ձևով և ոճով են փորագրված: Երկուսն էլ սկսվում են ՇՆՈՐՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ արտահայտությամբ և անմիջապես գալիս է արձանագրությունը գրողի անունը (մի դեպքում՝ Վահրամ, մյուսում՝ Մարիամ) և տիտղոսներն ու ծագումը: Ի տարբերություն սրա՝ երրորդ արձանագրությունը փորագրված է հյուսիսային պատի կենտրոնում 1225 թ., ուստի և խիստ տարբերվում է առաջին երկուսից թե՛ տեքստի ոճաբանական և թե՛ տառաձևերի առումով: Այսպես, այս արձանագրության Ն տառի գլխիկն ավելի ուղղաձիգ է և երկար, իսկ ներքին մասը՝ նեղ: I և II արձանագրություններում Զ-ի գլխիկը ձվաձև է և աջ մասում շարունակվելով ցած՝ միանում է հորիզոնական գծին: Իսկ երրորդ արձանագրության մեջ այս նույն տառն ունի գրեթե մաքուր շրջանաձև գլխիկ, որը ներքևի մասում ուղղահայաց գծով միանում է հորիզոնական մասին: Պետք է փաստել մի իրողություն ևս. երկու արձանագրությունն էլ երկաթագիր են:

1021 թ. Մարմաշենի վանքի հիմնական համալիրի կառուցումն ավարտված էր:

Խաչքարեր: Մարմաշենի 1972-73 թթ. պեղումների ընթացքում հայտնաբերվել են մի քանի տասնյակի հասնող խաչքարեր և բեկորներ: Խաչքարեր կան նաև Մարմաշենի վանքի Կաթողիկե եկեղեցուց հյուսիս ընկած գերեզմանատանը. եկեղեցու արևմտյան ճակատը զարդարված է խաչքարերով, որոնցից մեկի վրա փորագրված է.

ԹՈՒԻՆ ՆՀ: ԵՍ ՄԱՏԱԹԵ ԿԱՆԳՆԵՑԻ:

Հայտնի է, որ խաչքարերը տարբեր նպատակներով էին կանգնեցվում՝ գանազան կարևոր շինարարական կառույցների, իրադարձությունների, ինչպես նաև ննջեցյալների հոգու փրկության համար:

Մարմաշենի վանքը բաղկացած է մի քանի եկեղեցուց, տնտեսական կառույցներից ու օժանդակ շինություններից, որոնցից այժմ պահպանվել են հինգ եկեղեցիներ և այլ կառույցներ: Գլխավորը Կաթողիկե եկեղեցին է, որի կառուցումն սկսվել է 988 թ. և ավարտվել 1029-ին: Այն հուշարձանախմբի իշխող կառույցն է: Աչքի է ընկնում գուսպ և ներդաշնակ արտաքին ձևավորմամբ: Նրա կիսասյունների փնջերն ու կամարները, եռանկյունի որմնախորշերն ու քանդակագարդ խոյակները, մանավանդ պատերի ու գմբեթի ծածկի մնացած մասերի հետ ունեցած համաչափությունները, ինչպես նաև այս բոլորի ներդաշնակությունը տեղի բնության հետ Մարմաշենի վանքի կառույցը դարձնում են գմայլելի, ուստի դժվար է գտնել մի այցելու, որ կարողանա հեշտությամբ հայացքը կտրել այս ակնապարար տեսարանից: Ոչ պակաս հիացմունքի արժանի է նաև եկեղեցու ներսի հարդարանքը: Հազարավակներ կանգուն մնացած պատերն իրենց վրա են կրել չափազանց մեծ գմբեթը, որը կանգուն է մինչև մեր օրերը: Գմբեթը թմբուկին է փոխանցվել առազաստների, չորս կամարների ու հզոր որմնասյուների միջոցով: Գմբեթի շնորհիվ համալիրը դիտվում է որպես մի ամբողջական, դեպի երկինք (առ Աստված) ձգտող կառույց:

Եվրոպական գիտնական Յո. Ստրժիգովսկին այս ոճը նկատի ունենալով է, որ գրել է, թե այն մեծապես ազդել է Եվրոպայում այնքան շատ տարածում գտած գոթական ոճի ձևավորման վրա⁸: Մնացած եկեղեցիները լրացնում ու հաստատում են այս կարևոր կառույցը: Մրանց մեջ առանձնապես կարևոր է կլոր եկեղեցին, որը շարունակում է Զվարթնոցի ավանդները:

Կաթողիկեի հարավային պատին փորագրված արձանագրությունը հաստատում է վերոհիշյալ այն ենթադրությունները, որ Վահրամ իշխանը նաև ճարտարապետն էր. «ԵՍ ՎԱՀՐԱՄ ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ ԿԱՌՈՒՅԵՑԻ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՈՒՒՏԸ 1029 ԹՎԱԿԱՆԻՆ»: Շինարարությունը տևել է բավական երկար՝ մոտ 40 տարի: Այն ժամանակ սովորություն է եղել ամեն ինչ նվիրել հոգու փրկությանը: Այդպես էլ գրում է Վահրամը՝ հայոց Գրիգոր իշխանի որդին: Շինարարությունն իրականացվել է անթերի՝ տաշված քարերի շարվածքով: Աշխատանքներին մասնակցել են Վահրամ Պահլավունու մայրը՝ տիկնանց տիկին Շուշիկը, եղբայրը՝ Համգեն, որը նահատակվեց թուրքերի դեմ մղվող պատերազմում, Վասակը, որ գոհվեց 1220-ական թվականներին Ջալալ Էդ Դինի արշավանքների ժամանակ:

Երևի թե այս ամենն էլ հիմք են ծառայել արձանագրության այն տողերի, որ «Մենք մեր և մեր որդիների արյան գնով խնդրեցինք աշխարհին խաղաղություն»:

Արձանագրության մեջ Վահրամ Պահլավունին գտնում է, որ ինքը սերում է Գրիգոր Լուսավորչից. «...Ի ՅԵՂԷՆ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ԵՒ ԶԱՐՄԻՅ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ»: Վարդան Մամիկոնյանը Սահակ Պարթևի թոռն էր, Վարդանի մայրը՝ Սահակի աղջիկը:

Լեոն կարծում է, որ Պահլավունիներն իրենց համարում են Կամսարականներից սերած, քանի որ Մամիկոնյանների աղջիկը նույնպես կնության էր տրված

⁸ Յո. Ստրժիգովսկի. Հայկական ճարտարապետությունը և Եվրոպան (Ակնարկ հայ ճարտարապետության պատմության), Երևան, 1964, էջ 17:

Կամսարականներին⁹: Այստեղ մեծ նշանակություն կարող էր ունենալ Բագրատունի և Մամիկոնյան ցեղերի հակամարտությունը:

Հ. Մանանդյանը, խոսելով թուրք-սելջուկների կողմից Հայաստանը գրավելու մասին, բերում է XI դ. արաբ պատմիչ Իբն Ալ Ասիրի մանրամասն վկայությունները: Ըստ այդ տեղեկությունների, Մարմաշենն անվանվել է Մարիամ-նիշին, այսինքն՝ Մարիամի աթոռանիստ, ունեցել է ամրապատ պարիսպներ և պաշտպանված է եղել մեծ գետով¹⁰: Ակադեմիկոս Ն. Մառի «Անի» աշխատության մեջ այս բերդ-քաղաքը թուրքիմացաբար նույնացված է Անի քաղաքի հետ¹¹: Բայց իրապես, Մարիամ-նիշինը, ինչպես կոտակել է Մարկվարտը¹², Գյալինջայում գտնվող Մարմաշենի վանքն է, որ կառուցել է Վահրամ Պահլավունին 988–1029 թթ. վանքի հիմնադրմանը, ըստ արձանագրության, կենդանի մասնակցություն ցուցաբերելով՝ «Աբխազաց և Հայոց Մարիամ թագուհին, որը Արծրունյաց Սենեքերիմ թագավորի դուստրն էր, Բագրատունյաց Գագիկ Ա թագավորի թոռը և Վրաց ու Աբխազաց Բագրատ Դ թագավորի (1027–1072 թթ.) մայրը»¹³:

Ղ. Ալիշանը կարծում է, որ նույն այս Գյալինջայում և Մարմաշենում պետք է լինեն Վահրամ Պահլավունու կառուցած ամրապատ ու աշտարակապատ դղյակը¹⁴, որոնց մասին սանահնեցիներին գրած իր թղթերում Գրիգոր Մագիստրոսն ունի հետևյալ վկայությունը. «ԵՎ ԴԴՅԱԿՆԵՐ ՍԲԱՆՉԵԼԻ ՈՒ ԱՍՐԱՊԱՍ ՊԱՐԻՄՊՆԵՐՈՎ ՈՒ ԱՇՏԱՐԱԿՆԵՐՈՎ ՆԱ ՀԱՐԴԱՐԵՑ»¹⁵:

Մարիամ-նիշինի պարիսպներին թուրքերը մոտեցել են նավակներով, Ախուրյան գետի կողմից և մարտերից հետո կարողացել են գրավել քաղաքը: Ներս խուժելով քաղաք՝ սելջուկները ոչ միայն կոտորել են բնակչությանը, այլև հրդեհել ու քանդել են քաղաքի շինությունները: Իբն Ալ Ասիրը պատմում է. «Մելիք շահն ու Նիզամ Ալ Մուլքը առաջ շարժվեցին դեպի Մարիամ-նիշին քաղաքը, որի մեջ կային շատ վարդապետներ, քահանաներ, իշխաններ և քրիստոնյա ռամիկ ժողովուրդ, որոնք ապավինել էին այդ քաղաքի բնակչության պաշտպանությանը: Մա ամրացված քաղաք էր, որի պարիսպը մեծ պինդ քարերից էր, որ իրար էին միացած երկաթով ու կապարով: Սրա մոտ գտնվում էր մի մեծ գետ: Նիզամ Ալ Մուլքը պատրաստեց նավեր և այն ամենը, ինչ որ հարկավոր էր քաղաքի դեմ պատերազմ վարելու համար և մարտ մղեց դրա դեմ, որ շարունակվում էր օր ու գիշեր: Նա տեղավորեց զորքերը քաղաքի շուրջը և սրանք կովում էին փոխնիփոխ: Այնուհետև անհավատները սկսեցին անհանգստանալ և խիստ հոգնեցին ու ուժասպառ եղան»¹⁶:

Մարմաշենի մասին մեր մատենագիրների թողած վկայությունները կցկտուր են: Սակայն դրա փոխարեն վիմական արձանագրությունները առատ նյութ են

⁹ Լ. է. Ն. Անի, Երևան, 1996, էջ 167:

¹⁰ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 58–59:

¹¹ Н. М а р р. Ани, Л.–М., 1934. с. 26.

¹² Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, էջ 58–59:

¹³ Լ. Մ ե լ ի ք ու ե թ - Բ ե կ. Վրաց աղբյուրները հայերի և Հայաստանի մասին, Երևան, էջ 55:

¹⁴ Ղ. Ա լ ի շ ա ն. Շիրակ, Վենետիկ, 1888, էջ 67:

¹⁵ Գ ռ. Մ ա գ ի ս տ ը ու. Թղթեր, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 15:

¹⁶ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, էջ 58

մատակարարում ինչպես վանքի, այնպես էլ դրա տարբեր ժամանակների պատմության վերաբերյալ:

Վանքի կառուցման վերաբերյալ կարևոր վկայություններ ունի Ա. Լաստիվերտցին¹⁷: Մամվել Անեցին նույնպես շատ կարևոր տեղեկություններ է հաղորդում համալիրի հիմնադրման ժամանակի մասին: Այս տեղեկությունները հետագա դարերի պատմիչները գրեթե կրկնում են՝ անելով որոշ սրբագրումներ: Այդպես են վարվել XIII դ. Գրիգոր Գանձակեցին, Վարդան պատմիչը և այլք:



Նկ. 1



Նկ. 2

Դրամներ: Պեղումների ընթացքում (1973–1988 թթ.) Մարմաշենի վանքի հյուսիսային եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում հայտնաբերվեցին բյուզանդական դրամներ: Դրանք երկուսն են, կտրված բարձրորակ ոսկե թիթեղից, բազմանիստ, մեկը՝ 2.7 սմ, իսկ մյուսը՝ 5 սմ տրամագծով: Երկուսն էլ պատկանում են Կոնստանտին VIII կայսեր, որը գահակալել է 1025–1028 թթ.: Դրամները տարբեր փորագրության կնիքներով են դրոշմված, սակայն երկուսն էլ թողարկվել են Կոստանդնուպոլսում, ուս - տի ոչ միայն չափերն են նույնը, այլև դրանց երեսին դրոշմված պատկերները: Մեկի վրա Կոնստանտին կայսրը կրում է թագ՝ մինչև ուները իջնող ծոպերով: Թագի վերևում խաչ է պատկերված: Կայսրը մորուքով է, հագին ունի զրահ և ձեռքին՝ թագավորական գայիսոն (նկ. 1): Պատկերն առնված է կրկնակի շրջանակի մեջ, որի ներսում լատիներեն փորագրված է կայսրի անունը՝ KONSTANTINUS CEZAR. Երեսին դրամն ունի նույն արձանագրությունը: Դրոշմված դեմքը (Կոնստանտին թագավորի) ավելի նեղ ու երկար է, զրահի մանրամասներն էլ ավելի ցայտուն են: Դրամի հակառակ երեսին պատկերված է Հիսուս Քրիստոսը՝ գլուխը լուսապսակի մեջ ներգծված խաչի վրա (նկ. 2): Մազերը երկար են, դեմքը՝ մորուքով, լավ ընդգծված են ու սերը և հագուստը:

Չախ ձեռքին ինչ-որ բան ունի (հավանա բար, ա – վետարան)¹⁸:

Դրամները հայտնաբերվել են կաթողիկեի վաղ շերտերից, որից կարելի է եզրակացնել, որ նախկինում այս մասը բնակեցված չի եղել:

Քանի որ վանքի շինարարությունը սկսվել է 998 թ. և ավարտվել 1029 թ., ուստի դրամներն էլ համապատասխանում են այդ շրջանին: Հատկանշական է նաև, որ վայրը, որտեղից գտնվել են դրամները, քիչ ավելի բարձր է, քան հյուսիսային եկեղեցու հիմքերը:

Բնչ խոսք, կարևոր է նաև այն հանգամանքը, որ դրամների գյուտով ժամանակագրվում են ջնարակած թասերի, բարձր նստուկով կարմրախեցի քրե-

¹⁷ Պատմություն Արիստակիսի Լաստիվերտցու, Երևան, 1963, էջ 51-58, 62:

¹⁸ Խորին շնորհակալություն ենք հայտնում երջանկահիշատակ Խ. Մուշեղյանին՝ դրամները թվագրելու և արժևորելու համար:

դանների բեկորներ են, ինչպես նաև ջնարակած ձիթածրագներ: Հայտնաբերվել են նաև պղնձե բուզանդական, վրացական, էլտկուզյան տարբեր ժամանակաշրջանի դրամներ, որոնցով բնորոշվում են տվյալ շերտերը:

Երկաթե առարկաներ: Մրանց մեջ են գանազան գամերի հավաքածուն, կենդանիների պայտերը, տարբեր ժամանակներին վերաբերող դանակները, քարգործ վարպետի գործիքները: Գամերը կամ մեխերը տարբեր տեսակի ու չափի են: Բազում են պայտերը, որոնց ուսումնասիրությունը հաստատում է տեղում խոշոր եղջերավոր անասնապահության և հատկապես ձիաբուծության զարգացած լինելու փաստը:

Դանակներ: Մրանք ներկայացված են երկու խմբով.

1) սովորական ուղիղ` տարբեր չափերի

2) ծայրվի դանակներ:

Վերջիններից շատ են գտնվել Դվինի պեղումներից¹⁹: Մարմաշենից հայտնաբերվածների մեջ մեծ թիվ են կազմում նաև սովորական դանակները: Ծայրվի դանակների մեջ կան նաև կեռ շեղբ ունեցողներ: Մրանք տարբեր նպատակների են ծառայել, հիմնականում օգտագործվել են կաշեգործության մեջ, ինչպես նաև տարբեր գործիքներ շինելիս: Դանակների հետ գտնվել են այլ նյութերով²⁰: Մարմաշենից հայտնաբերվել են դանականման այլ գործիքներ, որոնց նշանակությունն այնքան էլ պարզ չէ:

ИЗ ИСТОРИИ ВАГРАМАБЕРДА–МАРМАШЕНА–ТИРАШЕНА

СЕРГЕЙ АРУТЮНЯН

Р е з ю м е

Мармашен, раскопки которого ведутся с 1972 г., был известен как культовый центр. После строительства Мармашенского монастыря центр культурно-просветительной работы перемещается в Мармашен, где Еремия и за ним Состенэс добиваются определенного успеха в борьбе с католическим мировоззрением среди армянского духовенства. Тирашенская–Мармашенская крепости защищали культовые центры отнашествия турок-монголов с

¹⁹ Վ. Ղ ա Ֆ ա դ ա ռ յ ա ն. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1951, էջ 165, նկ. 146, Բ. Ա ռ ա թ է լ յ ա ն. Քաղաքներն ու արհեստները Հայաստանում IX–VIII դդ., հ. I, Երևան, 1958, էջ 131–153:

²⁰ Անբերդի պեղումներից նույնպես մեծ թվով ուղիղ դանակներ են հայտնաբերվել. տե՛ս Ս. Հ ա թ ու թ յ ու լ յ ա ն. Անբերդի 1963 թ. պեղումները.– Եջմիածին, 1966, էջ 196:

восточной и северной стороны, а от Византийской империи – с западной и южной. Под руководством Смбата Тиезеракала и Гагика Багратуни, Ваграм Пахлавуни возглавлял строительство Мармашена и Анберда, а также сооружения фортификационных систем как столицы, так и всего государства.

FROM THE HISTORY OF VAHRAMABERD–MARMASHEN–TIRASHEN

SERGEY HARUTYUNYAN

S u m m a r y

Marmashen, excavations of which have been conducting since 1972 was known as a cult centre. After the construction of Marmashen monasterial complex the centre of cultural–elucidative work moved to Marmashen, where Yeremiya and later Sostenes succeeded in the struggle with the Roman world outlook among Armenian priesthood. Tirasen–Marmashen fortresses defended the cult centres from encroachments of Turks–Seljuks from east and north, and from the Byzantine Empire from west and south. Under the leadership of Smbat Tiezerakal and Gagik Bagratuni, Vahram Pahlavuni headed the construction of Marmashen and Anberd, as well as fortifications of the capital and the whole country.